

Միս-մինակ , անխօսուկ , աշուրները մարած ,
Տըժգոյն ճամբուն մէջէն , Մանր կ'անցնի կ'երթայ .
Մազերն հովուն կուլան , ու ձեռքը՝ կիտաբաց :
Խաչխաչներ կը թօթվէ յողնած կեանքին վրայ :

ՏԵՐՎԻՇ

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԷՒԹԻԻՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Մարդկային մտքի եւ ոգու արտայայտու-
թիւնները՝ գիտական ուսումնասիրութեան
նիւթ դառնալիս՝ տարբեր ժամանակներում
ուղղութիւնների տարբեր շրջանով են անցել :
Բայց մի աչքի ընկնող եւ որոշ չափով հաս-
կանալի հետեւողականութեամբ այդ արտայայ-
տութիւնները եւ կամ նրանցից առաջացած ու-
րոշ համախմբումները որքան բարդ են եղել
ըստ էութեան , որքան խորհրդաւոր եւ հո-
գեքանօրէն դժուարըմբռնելի , նրանց բացա-
տրութիւնն էլ փոխադարձաբար նոյնքան մութ ,
նոյնքան երեւուն է եղել , գրական հիմքե-
րից միանգամայն հեռու , միստիքական ան-
թափանցիկ քողով չղարշուած կամ բնազանցա-
կան անսանձ մտքի մոայլ չերտերով խտա-
ցած : Արեւելեան եւ արեւմտեան համարեա-
բոլոր ազգերի քաղաքակրթական զարգացման
երկարածիք ընթացքում նկատելի է այս բնո-
րոշ գիծը , որին անխտիր կարելի է հետեւել
ոչ միայն բնագիտական ըմբռնման մանկական
չըլաններում , այլ եւ այն հասկացողութիւն-
ների ամբողջութեան մէջ , որոնք պարտուում
են կրօնի , բարոյականութեան , իրաւունքի
եւ գեղարուեստի շուրջը :

Այնտեղ ուր քննութեան եւ չըլանկատ հե-
տադասութեան փոխարէն տրուում է միայն
վստ եւ սընթաց երեւակայութիւնը , վեր-
լուծման փոխարէն՝ վերացական մտքի թռիչքը
եւ բնազանցական ընդհանրացումների տենչը ,
յիբաւի անբնական կը լինէր մի ուրիշ հետե-
ւանք սպասել :

Բնազանցութեան յատկանշական գծե-
րից մէկն է ամենադիտարկելը՝ Մինչդեռ գի-

տութիւնը որ եւ է բարդ եւ առժամանակ ան-
լուծելի մի երեւոյթի առաջ կանգ առնելիս ,
ըմբռնելու եւ հասկանալու ծարաւով պապակու-
մ է եւ միւս կողմից համեստութեամբ խոստովա-
նում է՝ Չգիտեմ , բնազանցութիւնը մի յա-
ւակնոտ ինքնավստահութեամբ ճգնում է ման-
րակրկիտ երեւոյթների ամենակնճոտ ցանցը
պարզել , արեւգիւղի ամենախոր դաղանիքը
լուծել : Ոչ մի առեղծուած , ոչ մի խորհրդ-
դաւորութիւն նրա համար գոյութիւն չունին .
կամ թէ ծայրայեղ դէպքում՝ իւրաքանչիւր
առեղծուածի հետ կարծես նրան շնորհուած է
լինում եւ ամենազօր բանալին . բաւական է
մտքի մի յանդուգն եւ կամայական շարժում ,
եւ անա գորոտեան ամէն մի հանգոյց անհե-
տացած է նրա համար :

Մի սրամիտ եւ վերին աստիճանի յաջող ար-
տայտութեամբ՝ Սէն-Սիմոնը զնում է մեր ա-
ռաջ բնազանցութեան ամբողջ կորիզը . «Բնա-
զանցութիւնը տարբերում է գիտութիւնից
նրանով , որ նա ձգտում է ամեն ինչ՝ նախա-
տեսել՝ առանց սակայն դեռ մի բան տեսած լի-
նելու , այնինչ գիտութիւնը նախ ճշնանում է
եւ ապա նախատեսում » :

Բնազանցութեան եւ առնաստիճակ վերացա-
կան մէթոտի տիրապետութիւնը ուժեղ կեր-
պով նկատելի է ինչպէս բարոյագիտութեան
նոյնպէս եւ էսթետիկի սահմանում : Այս մեթոտի
գլխաւոր յատկութիւնն է՝ փոխանակ հոգեբա-
նական վերլուծութեան — որը ներկայփորձաւ-
կան ուղղութեան հիմնաքարն է կազմում —
մի քանի բարձրագոյն գաղափարներից առա-
ջացնել էսթետիքական այս կամ այն գաղա-
փարը . օր . , «գեղեցիկ» գաղափարից «ողբե-
րական» կամ «կատակերգական» գաղափարը
են :

Հանձնարեղ Գանթը իւր «կրիտիցիզմով» ուրույնց վերջապէս «գլուտ բանականութեան» սահմանը եւ դրանով մի ջիւղախիչ հարուած հասցրեց «ամենագէտ» բնագիտութեան հիմքերին, որի փլուտակներէնց սակայն ապագայում նոր ժխիւր արձակեցան եւ գոցեց կ'արձակեն դեռ երկար :

Գեղարուեստի փիլիսոփայութեան տեսակէտից Գանթի գլխաւոր արժանիքներից մէկը կայանում է նրանում, որ նա իւր Kritik der urtheilskraft աշխատութեամբ «գեղեցիկ»ի գաղափարը՝ հետեւաբար եւ էսթետիկը ինքնուրոյն հիմքերի վրայ դրեց, նրանից առաջ թէեւ աղօտ կեցողով արդէն գոյնուած էր այս ինքնուրուշութեան հողը, բայց սխտեմական մշակումը դեռ պակասում էր, որը եւ գոյնի թերեց Գանթը :

Նա այսպէս թէ այնպէս թէեւ թօթափեց րուցիոնալիզմի հիմքերը, բայց պէտք է նկատել որ յայտնի չափով ինքը միաց զարձեւել նրա փոշինների տակ (*)

Այսպէս ուրեմն ակնհայտ այն հարցից թէ ինչում է կայանում էսթետիկական հայեացքի առանձնայատկութիւնը, Այս առիթով բազմա-տեսակ կարծիքներ են արտայայտուել, ոմանք էսթետիկական ըմբռնումը նոյնացրել են ար-բամբանականին, իսկ ոմանք բարոյականին, եւ այսպիսով նրան տուել են միայն երկրորդական, ինքնուրուշութիւնից զուրկ մի դերքօր, Պատռնի էսթետիկը ուրիշ բան չէ, բայց եթէ «գեղեցիկ բարոյականութիւն» : Նա գեղարուեստական երկի յառաջ բերած խաբէութիւնը ընդունում է իբրեւ իսկական խաբէութիւն : բայց որովհետեւ այս տեսակ խաբէութիւնը ցած է եւ մերժելի, հետեւաբար, նրա կարծիքով գեղարուեստագէտներին պէտք էր պետութեան մէջ նոյնպէս ցած տեղ տալ : Այս պատճառով ահա, «գեղեցիկ»ը, ըստ Պլատոնի, դառնում է «բարի»ի ծառան : Գոր-նէյլի եւ Բուալոյի համոզմունքով գեղարուեստը նոյնպէս բարիին ծառայող մի միջոց է : համարեա նոյնն են մոտածում Բուլկին եւ Տալ-

ստոյը, որի մասին կը խօսինք դեռ յետոյ : Նոյնիսկ այնպիսի մի հեղինակաւոր եւ նրբա-միտ էսթետիկագէտ ինչպիսին Ֆրիդէլան է (Պրոֆեսոր . Լապլեզի համալսարանում) ազատ չէ այս կարծիքից : «բարոյականը գեղարուեստական գործունէութեան բարձ-րագոյն աստիճանն է» : «գեղարուեստի վեր-ջնական նպատակն է մարդկութիւնը դէպ ի բարին առաջնորդել » —ասում է նա իր աշխատութիւններից մէկում (Aesthetische Zeitfragen) :

Այսպիսի վարդապետական ուսնձգումներ էսթետիկի սահմանում՝ հասկանալի է որ վեր-ջինիս ինքնուրոյն նշանակութիւնը միանգա-մայն անգամահատում են : էսթետիկը մի փորձ-նական գիտութիւն է եւ ոչ գաւառաբանական, եւ նրա նպատակն է ցոյց տալ գեղարուես-տական ասարկանքը եւ երեւոյթները այն-պէս ինչպէս ցանկալի էր որ լինէին :

էսթետիկական ըմբռնումի ինքնուրուշու-թիւնը փրկելու համար՝ շատերը էսթետիկա-կանը միայն ձեռի մէջ փնտռեցին . բարոյա-կան եւ տրամբանական ըմբռնումով ձեռք բերած նիւթը իւր ինքնուրոյն գրոյմն ստա-նում է միայն ձեռի միջոցով, Բացի այս ա-ռարկայական հիմքից (որովհետեւ ձեռը մի առարկայական երեւոյթ է՝ իրերի յոտուկ) վերջեւս էսթետիկական ըմբռնումին փորձում են աւելի անհատական բնաւորութիւն ունե-ցող հիմքեր ընծայել : Էյստըր իւր Principien der Literaturwissenschaft գործումակառում է որ էսթետիկական ըմբռնման հիմքն է «գգայ-նութեան» յատարացումը : Այն գերը ինչ որ տրամբանական եւ բարոյական ըմբռնու-ման տեսակէտից կատարում են միտքը եւ կամքը—նոյնը կատարում է եւ զգացմունքը՝ էսթետիկականի նկատմամբ(*) : Այս կարծիքը —փոքր ինչ տարբերելով Էյստըրից—պաշտպա-նում է եւ Մ. Դից իւր Theorie des gefühls

(*) Նա պահանջում է «գեղեցիկ»ի անպայման ներդրանակութիւնը «բարի»ի հետ, —«էթէ միւ-սին գեղեցիկը արանաւոր մի բան է ուղում մերկայանել » թէեւ զարմանալի է, որ նա միւս կողմից Շելլերի հետ միասին գէտ էր Գոտշէտի էսթետիկական գաւառաբանին՝ դե-ղարուեստը շարժական բարոյականութեան ծառայեցնելու :

(*) Օր ., Շելլերի կարծիքով գեղարուեստա-կան երկում «ձեւը» առաջնակարգ տեղն է ընդունում, իսկ բովանդակութիւնը՝ երկրորդա-կան, եւ արուեստագէտ վարպետը գաղափարը կայանում է նրանում, որ նա նիւթը բովան-դակութեան ձեւով ծածկել կարողանայ : Շել-լերը «ձեւի» մաս չէ հասկանում յայտնի գըր-գիտին առաջացնող արտաքին երեւոյթների ինչպէս՝ օրինակ՝ համակարգութիւն, չափ, շնչոտ, եւն . այլ գեղարուեստական ստեղծա-գործութեան կեցող ընդհանրապէս (այն ինչ որ նորագոյն էսթետիկագէտները «գեղարուես-տական պատրանք» (illusion) են համարում :

zur Begründung der Aesthetik գրուածքում : Այս ընդհանուր ակնարկին վերջ տալուց եւ բուն խնդրին անցնելուց առաջ՝ աւելորդ չենք համարում առաջ բերել այն յաջող եւ շօշափելի համեմատութիւնը, որ անոււմ է Մ. Դէսսուառը գիտութեան եւ գեղարուեստի մէջ . «Կեանքը, ասում է նա, անմիջական իրականութիւն է . գիտութիւնը եւ գեղարուեստը իսկապէս ձգտում են թէեւ զէպի այդ իրականութիւնը, բայց միմեանցից բոլորովին տարբեր ճանապարհներով : Գիտութիւնը իրական կեանքի տպաւորութիւնները դարձնում է ճանաչելի, իսկ գեղարուեստը՝ վաշխելու, ճաշակելու արժանի : Այս պատճառով մի տեղ տիրում է քանակականութիւն, առարկայացում, պատճառականութիւն եւ անհրաժեշտութիւն, իսկ միւս տեղը՝ զգայականութիւն, անհատականութիւն, նպատակայարմարութիւն եւ ազատութիւն . մի տեղ մշակուած գաղափարներ, իսկ միւս տեղը պատկերներ չափաւորում : Գիտութեան շերտեր զէպի բնութիւնը կարծես ստրկական է . այնինչ արուեստին՝ աւելի տիրական . մէկը կարծես ասում է . «այսպէս է», — այնինչ միւսը՝ «այսպէս կամեւորում եմ ես» : (»)

• •

Էսթէտիկական նոյնիսկ ամենատարրական ճաշակով օժտուած մի անհատ գեղարուեստական տարբեր ստեղծագործութիւններ, — երաժշտական թէ թատրական, նկարչական թէ բանաստեղծական, եւն, — նկատելիս՝ զգում է որ համարեա բոլորը միանում են մի ներքին ծողակով . նա ականայ գալիս է այն եզրակացութեան թէ կայ ինչ որ մի զիջ, որ գեղարուեստի բոլոր ճիւղերի համար կարծես կեդրոնակն է, եւ որը հարկադրում է ընդունել հոգեկան դրժնէութեան մի նոյնութիւն այս բոլոր ճիւղերի մէջ : Բայց այս «ինչ որ» մասին նաակշընում իրան կատարելապէս հայել տալ չէ կարող, դժուարանում է պարզ եւ շօշափելի կերպով ձեւակերպել :

(») Այս վերջին խօսքերը թող ընթերցողին թւիր իմացութեան չեն թարկեն . այն ապտուութիւնը, որի մասին Դէսսուառն ակնարկում է, այսպէս թէ այսպէս սահմանափակ է եւ գտութիւն ունի միայն գեղարուեստի այսինքն գեղարուեստական բուն ստեղծագործութիւնների մէջ, իսկ գեղարուեստի փիլիսոփայութեան, էսթէտիկի սահմանում՝ երբեք :

Էսթէտիկական իրականութիւնը ամենաինքն ժամանակներից այս «ինչ որ»-ի, գեղարուեստի այս ընդհանուր նշանի՝ անոււմ մկրտել է «գեղեցիկ» բառով : Եւ հին էսթէտիկագէտների կարծեով գեղարուեստը «գեղեցիկ»ը պատկերացնելու արուեստն էր, ինչպէս եւ էսթէտիկն առհասարակ ուրիշ բան չէր, բայց եթէ ուսումը գեղեցկի մասին (») : Իսկ թէ ինչ բան է «գեղեցիկ»ը, — այս մասին տրւած են շատ թեր ու դէմ եւ երբեմն կամայական սահմանումներ . ոմանք գեղեցիկը փնտռել են զազափարական կատարելութեան, ոմանք զգայական հաճոյքի, ոմանք ձեւերի համակարգութեան մէջ, եւն : Բայց եւ այնպէս գեղարուեստի էությունը սրանով ամբողջովին չէ պարզւել : Ձրին էսթիտիկագէտների միակողմանիութիւնը կայանում է նրանում, որ «էսթէտիկական»ը եւ «գեղեցիկ»ը նրանք նոյնանիւ են համարել, այնինչ նոր ըմբռնումով այս երկու գաղափարները տարբերում են միմեանցից : Գիղէնի համարաբանի Պրոֆեսոր Կ. Գրոյը այս գաղափարները հետեւեալ ձեւակերպութեամբ է դանազանում . «Որ եւ է առարկայի ազդեցիկ տեսքը կամ երեւոյթը հարեկական է . իսկ եթէ այդ տեսքը կամ երեւոյթը զգայապէս համեմատ է, այն ժամանակ նա դառնում է գեղեցիկ : Այնպէս որ այն ամենը ինչ որ գեղեցիկ է, միւսնոյն ժամանակ կարող է եւ էսթէտիկական լինել, բայց ո՛չ այն ամենը ինչ որ էսթէտիկական է՝ գեղեցիկ : Մի Մֆիկատոֆէ, մի Նագո, մի Մակբեթ, մի Յոսեփ-Մոր էսթէտիկական տիպարներ են — բայց գեղեցիկ՝ երբեք : Ուրեմն այնտեղ, ուր գեղեցիկը բացակայում է, դարձեալ կարող ենք էսթէտիկական որ եւ է ազդեցութիւնից խօսել :

Շատերը զժաւարանում են, «զգայապէս համեմատ» իբրեւ գեղեցկի բնորոշ հիմքը ճանաչել, երկրորդ կրելով որ դրանով կը նսեմանայ գեղեցկի ամբողջ արժանիքը եւ իղէականութիւնը . այն մաքուր զգացմունքը, այն ազդեցութիւնը, որ յատուկ է գեղեց-

(») Այս հակացողութեան հիման վրայ է որ «էսթետիկ» բառը հայերէնում թարգմանուած է «գեղեցիկագիտութիւն» կամ «գեղագիտութիւն» . որը մեր կարծեով սխալ է, որովհետեւ ինչպէս ցույց կը տեսնենք էսթետիկականի» եւ «գեղեցիկի» գաղափարները տարբերում են միմեանցից :

կրին՝ նրանք չեն ուզում զգայալէս հաճելիիցած մակերևութին իջեցնել, օր․․․ մի տապալկած մօր համին ու հոտին հաւասարեցնել։ Դրոշն այս առիթովը նկատում է․ «Ներք էսթեթիկականին եւ ոչ-էսթեթիկականին մէջ եղած տարբերութիւնը որոշուած է, այն ժամանակ որոշ է նաեւ զգալալէս հաճելիի եւ գեղեցկի մէջ եղած նուրբ տարբերութիւնը։ Գեղեցիկը չէ ստորանում եւ հաճելիին չէ հաւասարում, այլ ընդհակառակն հաճելին ազատ եւ իդէալական միջոցներով անցնում եւ էսթեթիկականի բարձրութեանն է հասնում ու զրանով գեղեցկի փոխում։ Արտաքուստի կարկէ շատ զփուր է զգայալէս հաճելին՝ եւ գեղեցիկը տարբերել որ եւ է առարկայից․ իսկ ներքուստ դա կայանում է այն մեծ զանազանութեան մէջ, որը առաջ է բերում գիտակցութեան էսթեթիկական եւ ոչ-էսթեթիկական գրութիւնը։»

Այս խօսքերից հետեւում է, որ գեղեցիկը միշտ բարձր է, որովհետեւ էսթեթիկական է (*):

Գեղարուեստը բնութեան ընդօրինակութիւնն է, բայց ի՞նչով է տարբերում բնութիւնը գեղարուեստից։ «Բնութիւնը հաստատակալով է, ասում է Գէօթէն, նրա զայնիւր չափում, բացառութիւններ հարուստ եւ օրէնքներն անընկճելի են։» Բնութիւնը թաղամասն երեւոյթներին եւ զօրեղ ազդեցութիւններին մի անվերջ պատրամա է․ լեռների հսկայական բարձրութիւնը, գիշերուայ հանդիսաւոր լուսութիւնը, ջրվէժի կաշկանդող ուժը, ծովի անհզորութիւնը, գիւղերի կարիարդական փայլը, վերջապէս մեղմամղձոտ գեղեցկութիւնը, գոյների եւ հնչիւնների անվերջ քառու, վերջապէս կենդանի մարդը իւր ամբողջութեամբ, իւր հիասքանչ խորհրդաւորութեամբ, ահա այդ պատրամային հեռանկարը, մի հեռանկար որ գեղարուեստը հարեւանցի գոյներով, սահմանափակ ծաւալով միայն կարող է ներկայացնել։ Բայց ի՞նչ ունի գեղարուեստը բնութեան այս անհա-

սանելի բաղմազանութեան առաջ դնելու․ նա տալիս է մեզ ոչ թէ բնութիւնը, այլ բնութեան էսթեթիկական տեսքը, որի տպաւորութիւնը աւելի չէ զորացած՝ հետեւաբար եւ աւելի մաքուր է։ Բնութիւնը ի հարկէ նոյնպէս էսթեթիկական տպաւորութիւններ է առաջացնում, բայց սա կարծես միպատահական, միանգամայն աննախատեսուած երեւոյթ է։ Բարեւալատ զգացումներով ստորումած մի անհատ գուցէ տիեզերքն ստեղծողին փառաբանէ, որ նա օգտակարի կողքին դրել է եւ գեղեցիկը։ Բայց այս փառաբանումը եւ հաճոյքը այն չէ ինչ որ մենք ընծայում ենք իսկական գեղարուեստագիտի եւ նրա ստեղծագործութեանը նկատում է իրաւաբան Գրոգը)։

Միւս կողմից չպէտք է մոռնալ նաեւ, որ գեղարուեստի ստեղծած զգացմունքներին ներբութեան եւ խորութեան առաջ՝ բնութիւնը (նեղ մտքով վերցրած) ոչինչ չունի դնելու։ Մարդկային կարիքը յուզող, տակմութիւնը անող ամենաուժեղ զգացմունքներին, եռուն կրքերին, հրատապ աւելնին՝ միմիայն գեղարուեստի միջոցով կարելի է էսթեթիկական բնաւորութիւն տալ․ օր․․․ երաժշտութիւնը՝ գեղարուեստի ճիւղերից այս ամենաանառաւ կանը, բնութեան մէջ ոչինչ չունի իր նմանը (թէեւ ոմանք փորձում են առուակի կարկաշտի կամ ալիքների շառաւման մէջ որոնել երաժշտութեան բաղմունք)։

Գուցէ նկատողներ լինին՝ եթէ գեղարուեստը տրիշ բան չէ բայց եթէ բնութեան ընդօրինակութիւնը, այն ժամանակ դառնում է միանգամայն աւելորդ, որովհետեւ այդ դէպքում մենք ունենք եւ կը վայելենք հէնց բնութիւնը, որին գեղարուեստը երբեք չէ կարող հասնել, բայց մտածողութեան այս եղանակով կը նշանակէ գեղարուեստի էությունը հիմնովին չըլել․ կարծես թէ խնդիրը վերաբերում է բնութեան ու գեղարուեստի մէջ եղած աստիճանական տարբերութեանը․ չէ՞ որ գեղարուեստի էսթեթիկական արժէքը հէնց նրանումն է կայանում, որ նա ընդգրկուն չէ եւ նա չէ էլ կամենում բնութիւն դառնալ, ալ միայն ներկայացնել․ օր․․․ երբ մի վարպետ դնում է մեր առաջ բնութիւնից նկարում մի տեսարան՝ մենք մեր բաւականութեան աղբիւրը որոնում ենք ոչ թէ նրբի տեսարանի մէջ ինքնընթացի, այլ այն երեւոյթի մէջ թէ ի՞նչպէս բնութեան որ

*) Գեղեցկի գաղափարից պէտք է զանազանել եւ «վեհ» գաղափարը։ Էլստորի կարծիքով կենսաբան եւ բնութեան մէջ գեղեցիկի կանոնաւորը, տիպականը եւ նորմայն է․ իսկ վեհի գաղափարը գեղեցկից աւելի բարձր է, «տիպական կատարելութիւն» սահմանից աւելի վեր։ Շրիլէրը իւր գրեւորներում «վեհ» աւանդուածից չէտողներին է, այն ինչ Գէօթէն գեղեցկի առաջնակարգ թարգմանը։

եւ մի է շերտ գծերի եւ գոյնների խառնուրդով կտաւի մի կտորի վրայ դրոշմած է :

Վերջերս մի կողմից դարվիճականութեան եւ միւս կողմից քննադատական հոգեբանութեան ազդեցութեան տակ, գեղարուեստի գաղափարը, հասկացողութիւնը, մի ալքի ընկճել յեղաշրջման հեթմարկեց : Հետզհետեւ աւելի ուժեղ եւ բազմակողմանի կերպով շեշտուած է կենդանիների եւ մանուկների խաղի ու դեղարուեստի մէջ եղած նմանութիւնը : Ժաւառակին, Դարվինը, Սպէնսեր, Վալաւան, Էնն, Իրենց գրութեան արժանի են մանաւանդ Կ. Գրոգը Die spiele der Thiere, Einleitung in die Aesthetik, եւ Գ. Լանգէի Kunsflerische Erziehung der deutschen zugend, Die bemusste selbstaüstung als kern des künftl. genus-ses.)

Բարձր աստիճանի վրայ կանգնած բոլոր կենդանիները, նաեւ մանուկները իրենց խաղով՝ ինչպէս եւ մարդիկ գեղարուեստի միջոցով՝ ձգտում են մի առեւտելոյք գործունէութիւն առաջագնացել : Վագնէր այս գործունէութիւնն անուանում է «գիտակցական ինքնախաբէութիւն» : Այսպէս՝ կատուն թաշկինակի հանգոյցի նետը խաղում է, երեւակայելով թէ մկան հետ է խաղում : Թուրթակները երբեմն գիտմամբ հիւանդ են ձեւանում : Երախան մօր ծունկին նստած իրան երեւակայում է ձիւ վրայ, կամ թէ որ եւ է աթոռ համարում է կառք եւ իրան կատապան, Էնն : Մանուկների ինքնապատրանքի ընդունակութիւնը նոյնքան ուժեղ է ինչպէս եւ չափաներին, որոնք զեցուք թատրոնում նստած՝ գրաւատիկական ինքնապատրանքին անձնատուր են լինում : Մանուկը՝ համաձայն իւր բնածին գեղարուեստական ընդունակութեանը՝ ձգտում է ոչ թէ բուն առարկաներն ունենալ, այլ խաղալիքները : Թեքի կամ փայտի կտորից չինուած մի մտրակ՝ օրինակի համար, նրան աւելի է գրաւում քան թէ որ եւ է մի գործարանում պատրաստած իսկական մտրակի : Ճիշդ այսպէս նաեւ՝ էսթետիկական կրթութեւն չափաւասը գեղարուեստական բաւականութիւն ստանալու համար ցանկանում է բնութեան կամ կենսի ոչ թէ կատարելալ, այլ առեւտելոյք ընդգրկնակութիւնը :

«Րէալիզմի» ծայրայեղ ծագրանկարը, իսկականի հաստատրիմ ընդունակութիւնը միանգամայն ունչացնում է էսթետիկական հանգը, օր : , մոմից շինած մարդիկ, որոնք երբեմն այնքան բնական են, որ թւում է թէ շարժում ու շնչում են, էսթետիկական ոչ մի բաւականութիւն չեն կարող պատճառել, որովհետեւ այս մոմեղէն չինուածքներում իսկականի եւ երեւութականի մէջ եղած սահմանը բոլորովին անհետանում է : Նոյնպէս իսկական պարախաղը (ballet) (ո՛չ միջկատակայինը) թատերական արուեստներից ամենաստորինն է, որովհետեւ գրաւիչ մարմինների եւ սիրուն շարժումների առաջացրած հաճոյքը, որը կարելի է կրկնում եւ ուրիշ տեղերում աւելի լաւ վայելել, բնական հաճոյք է եւ ոչ էսթետիկական (կրկնում էսթետիկական որոշ տպագրութիւն առաջացնում է միայն կլուններ՝ գիտակցական ինքնախաբէութեամբ) :

Տեղի եւ ժամանակի համեմատ փոխում են նաեւ գիտակցական ինքնախաբէութեան եւ «իլլիւզիոն» պահանջները : օր : , անհեթեթութիւն կը լինէր թատրոնական այն «իլլիւզիոն» որը ընդունուած էր զեցուք Նէլսոնի ժամանակ՝ այժմ առաջացնել, ինչպէս մանուկը իւր զարգացած արարքի աստիճանին : Գործածում (օր : , աթոռ իրբեւ կառք է ընդունում, յետոյ անցնում է շինուած փոքրիկ կառքին) — այնպէս էլ ժամանակի բնութագրում կրթութեան աւելի բարձր աստիճանի վրայ կանգնած հասարակութիւնը պահանջում է «իլլիւզիոն»ի աւելի նոր եւ նուրբ արտայայտութիւն : Հանձնարել վագնէրը իւր գեղարուեստական եւ թատերական նրբազգացութեամբ շատ խոր կերպով ըմբռնեց այս գիծը եւ այդ է պատճառը որ առանձին մի չէնց յատկացրեց իր օպերաների համար (Բայրոյթի նշանաւոր թատրոնը), այնպէս որ ապագայում թատրոնական դա՛լիճին բոլորովին մթնցնելը, նուազախմբի ծածկուելը եւ յուշարարական արվելի վերջի վերջէն ընդհանուր սովորութիւն դառնալ :

Վ. ՆԱԼԻԱՆԴԻԱՆ

ԲՅՆ

(Եստուճակից)